

Սահմանային խնդիրների վերաբերյալ Հայաստանի և Ադրբեջանի դիրքորոշումը (1918 թ. հունիս-օգոստոս)

Յուրիկ Ղուլյան

Հանգուցային բառեր. Թուրքիա, Կ. Պոլիս, Ղարաբաղ, Չանգեզուր, սահման, համաժողով, կառավարություն, քաղաքականություն

Նախաբան

1918 թ. մայիսին Անդրկովկասի ժողովուրդները հիմք դրեցին անկախ ազգային պետությունների: Տարածքային վեճերի պատճառով հենց սկզբից լարված հարաբերություններ ստեղծվեցին հանրապետությունների, հատկապես Հայաստանի ու Ադրբեջանի միջև, որոնք սահմանների հարցում ունեին բացարձակապես տարբեր դիրքորոշումներ: Այս խնդրում երկու հանրապետությունների տարաձայնություններն էին որոշիչը նրանց թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության համար:

Տարածքային խնդիրները Հայաստանի ու Ադրբեջանի միջև (1918 թ. հունիս-օգոստոս)

1918 թվականի ամռան դրությամբ արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացված ՀՀ-ն զբաղված էր սեփական ժողովրդի վտանգված ֆիզիկական գոյությունն ապահովելու գործով: Նման պայմաններում հայ ազգի ոչ միայն քաղաքական, այլև ֆիզիկական գոյության հետ հաշտվել չկամեցող թուրք-թաթարական ուժերի հետ համաձայնության գալը անհնարին էր, որի պատճառով Հայաստանը բնաջնջումից խույս տալու համար ստիպված էր անընդհատ կռիվ տալ նրանց դեմ: Մյուս կողմից՝ խուսափելով առձակատման գնալուց՝ փորձում էր հարևան պետությունների, այդ թվում և Ադրբեջանի հետ հաստատել բարիդրացիական, «տանելի» հարաբերություններ: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Անդրկովկասում թուրքերի եղած ընթացքում ՀՀ կառավարությունը Ղարաբաղի ու Չանգեզուրի նկատմամբ իրականացնում էր զգուշավոր քաղաքականություն¹:

ՀՀ արտաքին քաղաքականության որդեգրած զգուշավոր կուրսն իր արտացոլումը գտավ ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու կողմից 1918 թվականի հունիսին հրապարակած կառավարության հռչա-

¹ Տե՛ս Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը 1919-1921 թթ., Երևան, 1991, էջ 24:

կագրում: «Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունը պիտի ունենա մեկ իշխող սկզբունք՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել սահմանակից պետությունների հետ, բոլոր միջոցներով խուսափել նրանց հետ բախումներից՝ ելնելով այն դրությունից, որ մեր ժողովրդին, մեր երկրին հանգիստ է հարկավոր, հարկավոր է խաղաղություն, թեկուզ և վտիտ: Մենք քայքայված ենք, ուժասպառ և վերջապես կազմալուծված: Մենք ի վիճակի չենք ուժերի հետագա լարվածության, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Ցանկացած նոր արտաքին բարդացում մեզ սպառնում է անխուսափելի ու վերջնական կործանում: Մենք ջարդված կողմ ենք, պարտված: Մենք պետք է դա պարզ հասկանանք, հաստատ հիշենք և ունենանք միայն մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովրդի մնացորդներին և հերոսական փորձ կատարելով ստեղծել դեռևս մեզանից չիլված փոքր տարածքի վրա պետություն: Այդ մտածողությունը պիտի դառնա առաջնորդող սկզբունք մեր այսօրվա արտաքին քաղաքականության համար»²,– ասվում էր կառավարության հռչակագրում:

Ակնհայտ է, որ ՀՀ արտաքին քաղաքական նման ուղղության որդեգրումը պայմանավորված էր երկրի ծայրահեղ ծանր ներքին կացությամբ, երբ «ուժասպառ ու կազմալուծ վիճակում և գերմարդկային ճիգերով փորձում էր ռոքի կանգնել, անգամ իր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն հիմնել»³: Հատկանշականն այն է, որ երկրամասի մեծ մասի թուրքական զինագրավման պայմաններում Հայաստանի Հանրապետությունը, զրկված լինելով իր կենսական տարածքների մեծ մասից, ամփոփված մի փոքր հողակտորի վրա, երկրում ունենալով բազում լուծում պահանջող խնդիրներ, հարյուր հազարավոր գաղթականներ, տասնյակ հազարավոր որբեր, քայքայված տնտեսություն, չէր կորցնում լավատեսությունը ու հավատը վաղվա Հայաստանի հանդեպ: Դա իր արտահայտությունը գտավ նաև 1918 թ. օգոստոսի 1-ի Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստում Խորհրդի նախագահ Ա. Սահակյանի ճառում. «Այո՛, մեր Հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և կարծես թե պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները

² Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 323:

³ Նույն տեղում:

քարացած չեն կարող մնալ միշտ: Ես հավատում եմ, որ մեր սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով, մեր արդար ու անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողամասերի վերաբերմամբ»⁴: Հատկանշականն այն է, որ այդ մասին հայտարարվեց նիստին ներկա Թուրքիայի ու նրա դաշնակից պետությունների ներկայացուցիչների ներկայությամբ: Եվ որպեսզի ականջ շոյեն այս քայլերին մտադիր էին հասնել բարեկամական դաշինքներով Թուրքիայի և նրա դաշնակից պետությունների հետ:

Իսկ արդեն ՀՀ պառլամենտի 1918 թ. օգոստոսի 3-ի նիստում հրապարակած հայտարարության մեջ կառավարությունը արտաքին գործերի սահմաններում ի թիվս այլ հարցերի նախատեսում էր Ատրպատականի (Ադրբեջան) և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով լուծել Հայաստանի և այդ պետությունների սահմանների հարցը, հիմք ունենալով էթնիկական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին⁵:

Հայաստանն ու Ադրբեջանը հենց սկզբից սահմանների հարցում բացարձակապես տարբեր տեսակետներ ունեին: Այդ տարաձայնություններն էին որոշիչը երկու հանրապետությունների թե արտաքինն թե ներքին քաղաքականության համար: Թեև Կ. Պոլսում նախատեսվում էր լուծել Թուրքիայի և Կովկասի, ինչպես նաև անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանային հարցերը, սակայն Ադրբեջանը մտադիր չէր հրաժարվել Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներից: Նա գտնում էր, որ «որտեղ և ինչպես էլ սահմանային հարցերը լուծվեն, այն ոչ մի դեպքում չի կարող վերաբերել Ելիզավետպոլի նահանգին, որովհետև այն Ադրբեջանի անբաժանելի մասն է կազմում»⁶: Այս փուլում ՀՀ կառավարությունը Ադրբեջանի հետ սահմանային հարցերում մտադիր չէր առճակատման գնալ և նախընտրում էր դրանք լուծել Կ. Պոլսում: Այդ մասին նա մեկ անգամ չէ, որ հայտարարեց Ադրբեջանին⁷: Ի դեպ, դրանք լուծելու հայտարարություններ չէին, այլ կոնկրետ գործողություններ, որով հայկական կողմը դրսևորում էր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու իր պատրաստակամությունը՝

⁴ Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 15:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 11:

⁶ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 44, թ. 1, նաև ֆ. 200, ց. 1, գ. 85, թ. 3:

⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 18:

սպասելով Կ. Պոլսի համաժողովի արդյունքներին, որտեղ իր լուծումն էր ստանալու նաև Ղարաբաղի հարցը: Ասվածի ապացույց է հանդիսանում Գանձակից Նիկոլ Աղբալյանի, Մարտիրոս Հարությունյանի և Մինաս Արզումանյանի ստորագրությամբ հունիսի վերջերին սուրհանդակի միջոցով Ղարաբաղ ուղարկված այն գրությունը, որով նրանք խորհուրդ էին տալիս «.... լինել շրջահայաց և աչալուրջ, հարևանների հետ խաղաղ ապրել, ամեն կերպ խուսափելով խաղաղությունը խախտող առիթներից, համբերությամբ սպասելով Ղարաբաղի հարցի լուծման Պոլսյ հայթուրքական կոնֆերանսում»⁸: Խան-Խոյսկու նորաստեղծ կառավարությունը, Բաքվի և Գանձակի նահանգներն ամբողջությամբ Ադրբեջանի կազմի մեջ հաստատելով, Լեռնային Ղարաբաղն ու Չանգեզուրը համարում էր իր անկողոպտելի սեփականությունը, թեև այդ տարածքների ազգաբնակչությունը կազմում էր միատարր հայ բնակչությունը: Ադրբեջանի կառավարությունը հետևողական էր հատկապես Ղարաբաղին տիրանալու հարցում: Մտանալով Ղարաբաղի հայության Ադրբեջանի իշխանությունը մերժելու պատասխանը՝ ադրբեջանական կողմը օգնության համար դիմեց Թուրքիային: Այդ պատճառով վերջինս հայտարարեց, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև գոյություն ունեցող տարածքային վեճը պետք է լուծի 1918 թ. հուլիսի վերջին Կ. Պոլսում գումարվելիք կոնֆերանսը: Հայկական կողմը, որն ակնկալիքներ ուներ Կ. Պոլսի կոնֆերանսից, Թուրքիայի ղեկավար գործիչների հետ Ղարաբաղի խնդրի կապակցությամբ հանդիպումներ ունենալով համոզվեց, որ Ղարաբաղի հարցում թուրքերը վճռականորեն հանդես են գալիս Ադրբեջանի օգտին: «Մեր դիտողությունները Հայաստանի սահմանների չափազանց նեղ լինելու մասին շարունակ հանդիպում էին թուրքերի համար դիմադրությանը: Նրանք դեմ էին, որ Ղարաբաղն ու Չանգեզուրը տրվեն Հայաստանին, որովհետև ցանկանում էին իրենց ճանապարհը բաց պահել դեպի Բաքու»⁹, – այդ օրերի բանակցությունների մասին հիշում է Ալ. Խատիսյանը:

Ղարաբաղին ու Չանգեզուրին տիրանալու ադրբեջանական դրդապատճառները պայմանավորված էին հետևյալ հիմնական գործոններով.

1. Ղարաբաղի ու Չանգեզուրի տարածքը Ադրբեջանի Հանրապետության համար ուներ ռազմավարական խոշոր նշանակություն: Լեռնային Ղարաբաղին ու Չանգեզուրին տիրանալը, որը Հայաստանի համար հանդիսանում էր բնական արգելապատնեշ, Ադրբեջանին Հայաստանի

⁸ Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Երևան, 1999, էջ 159:

⁹ Հայրենիք», Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 206:

նկատմամբ կղնեք բարենպաստ դրության մեջ և վերջինիս կհանձնեք հարևան պետության ողորմածությունը:

2. Ադրբեջանը ձգտում էր այդ տարածքներին տիրանալ ելնելով նրանց տնտեսական կարևորությունից, քանի որ հարուստ ալյախական արտադրարարի առկայությունը կենսական անհրաժեշտություն էր քոչվոր բնակչության հսկայական զանգվածի համար: Ղարաբաղի լեռնային մասն ամառային արտադրարար էր հանդիսանում քոչվորների հոտերի համար, ուստի նրա անջատումը դաշտային Ղարաբաղից վտանգում էր քոչվորային անասնապահությունը:

Դրա կարևորությունը ընդունում էին նաև Ղարաբաղը Ադրբեջանին տալու հարցում շահագրգիռ թուրք պարագլուխները, որոնցից Թալեաթ փաշան դա հիմնավորում էր նրանով, որ «այստեղ տեղական թուրքերը սարն են բարձրանում և այդ պատճառով անհնարին է այդ երկիրը տալ Հայաստանին»¹⁰: Սակայն ակնհայտ է, որ դրա տակ թուրքական կողմը քաղաքական շահեր էր հետապնդում: Ղարաբաղի և Զանգեզուրի ռազմավարական նշանակությունը Ադրբեջանի համար կարևորվում էր նաև այն տեսակետից, որ դրանց տիրելը Բաքվին թույլ էր տալիս անմիջական ցամաքային կապ հաստատել Թուրքիայի հետ: Բացի այդ նրանք հանդիսանում էին Շարուր-Նախիջևանի և Արարատյան դաշտավայրի մուսուլմաններով բնակեցված լայնարձակ տարածքների հետ կապող օղակ, որի գրավումը Ադրբեջանի համար հեշտացնում էր իր իշխանության տարածումն այդ տարածքների նկատմամբ:

3. Վերջապես, թուրքական ազգայնականների փոքրասիական թուրքերի հետ տարածքային սահմանակցման բնագոյային ձգտությունը ադրբեջանական հավակնությունների երրորդ հիմնական պատճառն էր¹¹:

1918 թվականի հունիսի 25-ին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովը երկու հանրապետությունների տարածքների ճշտման վերաբերյալ կազմվելիք հանձնաժողովի մասին գրությամբ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին տեղեկացրեց, որ Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել պետական սահմանների որոշմանը և իր «պարտքն»¹² է համարում այդ հարցի վերաբերյալ նախօրոք հարաբերությունների մեջ մտնել բոլոր հարևան պետությունների հետ, այդ թվում՝ նաև Հայաստանի: Այնուհետև տեղե-

¹⁰ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 290:

¹¹ Տե՛ս ՀՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտ, Ս. Կարինյանի արխիվ, Մ. Туманов, Дипломатическая история РА, 1925, էջ 199:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 23:

կացվում էր, որ երկու կողմերի սահմանների ճշտման հետ կապված Ադրբեջանի կառավարությունը նպատակահարմար է համարում այդ նպատակի համար հատուկ հայ-ադրբեջանական սահմանագծման հանձնաժողովի կազմակերպումը, որը «կկարողանա մոտակա ժամանակաշրջանում անցնել բոլոր հարցերի քննարկմանն ու լուծմանը»¹³: Հայոց ազգային խորհրդի համաձայնության դեպքում խնդրվում էր նշել երկու կողմերի պատգամավորների հանդիպման վայրն ու ժամանակը՝ հանձնաժողովի աշխատանքների համար որպես նպատակահարմար վայր առաջարկելով Ելիզավետպոլը (Գյանջա)¹⁴: Ըստ որում, Ադրբեջանըի սկզբանե հրաժարվում էր քննարկել Ղարաբաղի և Չանգեզուրի պատկանելության հարցը՝ դրանք համարելով ԱԴՀ անբաժան և անվիճելի մասեր՝ հղում անելով Մուսուլմանական Ազգային խորհրդի և Հայոց Ազգային խորհրդի համատեղ նիստում «ընդհանուր գծերով ձեռք բերված բանավոր համաձայնությունը»¹⁵ և ԱԴՀ տարածքների սահմանագատման վերաբերյալ ու ընդգծելով, որ այդ նիստում Ղարաբաղի հարցը չէր բարձրացվել¹⁵: Միաժամանակ ԱԴՀ-ն պահանջում էր ՀՀ կառավարությունից անհապաղ միջոցներ ձեռնարկել Անդրանիկի ջոկատն իր «անբաժան» մաս հանդիսացող Չանգեզուրից դուրս բերման ուղղությամբ:

Մյուս կողմից Ադրբեջանը, չսպասելով Կ. Պոլսում հարևանների հետ սահմանային հարցերի որոշմանը, արդեն գործողության մեջ էր դրել կողմերի միջև վիճելի առարկա հանդիսացող տարածքների և տիրելու կառավարության քաղաքականությունը: Մասնավորապես դա դրսևորվեց ադրբեջանական կառավարության կողմից Ելիզավետպոլի գավառի հայկական լեռնային մասի հայ բնակչության զենքի առգրավմանն ու զինաթափման մեջ, որի վերաբերյալ իր բողոքը հայտնեց Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը: Արտահայտելով ՀՀ կառավարության կարծիքը՝ հուլիսի 23-ին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին հղած նոտայում Ա. Չամալյանը ադրբեջանական կողմին կոչ արեց դադարեցնել զենքի առգրավմանն ու բնակչության զինաթափման գործողությունները մինչև Կ. Պոլսի կոնֆերանսում հանրապետությունների միջև սահմանների վերջնական որոշումը¹⁶՝ գտնելով, որ մինչև հարցի լուծումը ցանկացած հարց, կապված զինաթափման հետ,

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, թթ. 20, 25, 33:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 44, թ. 7:

հիվանդագին կերպով կանդրադառնա նշված շրջանի հայ բնակչության տրամադրության վրա և տեղիք կտա հուզումներին:

Հայկական կողմի հուշագրին որպես պատասխան օգոստոսի 1-ին ստացվեց Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության հայտարարությունը, որով կառավարության կողմից նախաձեռնված զինաթափումը, այդ թվում և հայերի, պատճառաբանվեց «երկրում կարգի հաստատման, բոլորի ու ամեն մեկի կյանքի ու գույքի ապահովման անհրաժեշտությամբ»¹⁷: Հայկական առաջարկն այն մասին, որ մինչև Կ. Պոլսի կոնֆերանսում հանրապետությունների միջև սահմանների վերջնական որոշումը դադարեցնեն զենքի առգրավման ու բնակչության զինաթափման գործողությունները, Ադրբեջանը համարեց իր համար անհասկանալի, գտնելով, որ որտեղ և ինչպես էլ լուծվի սահմանների մասին հարցը, այն համենայն դեպս չի կարող վերաբերել Ելիզավետպոլի գավառին, որը, ըստ նրանց, Ադրբեջանի Հանրապետության անբաժան մասն է և կառավարվում է՝ առանց որևէ դրսի միջամտության: «Իմ կառավարությունը գտնում է, որ Հայկական Հանրապետության կառավարությունը կհամաձայնի վերոշարադրյալի հետ և ինքն էլ կօգտագործի բոլոր ուժերը, որպեսզի զինաթափման գործընթացն անցնի ոչ հիվանդագին ձևով»¹⁸, – սաված էր դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովի հուշագրում:

Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև սահմանները դեռ չէին որոշվել, և չէր ստորագրվել որևէ դաշնագրային արձանագրություն: Թեև այդ հարցի շուրջ տեղի էին ունեցել մի շարք բանակցություններ, բայց դրանք որևէ արդյունքի չէին հասցրել: Պատճառը հարցի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներն էին: Հայկական կողմը, սահմանային հարցերի քննարկման ժամանակ հիմք ընդունելով ազգագրական սկզբունքը, գտնում էր, որ Ղարաբաղի լեռնային մասը, որի ազգաբնակչության 70 տոկոսը հայեր են և միայն 24 տոկոսը մուսուլմաններ, պետք է անցնի Հայաստանին:

Ադրբեջանական կողմը, չվիճարկելով պաշտոնական վիճակագրության տվյալները, գտնում էր, որ այդ սկզբունքը չի կարող կիրառվել Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ, և որ այդ մարզերը պետք է մտցվեն Ադրբեջանի կազմի մեջ: Ընդհանուր առմամբ ադրբեջանցիները չէին ժխտում ազգագրական սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը, բայց երբ հարցը վերաբերում էր Անդրկովկասյան հանրապետություն-

¹⁷ Նույն տեղում, թ. 2:

¹⁸ Նույն տեղում:

ների սահմանագատմանը, նրանք հրաժարվում էին այդ սկզբունքն ընդունելուց¹⁹:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ադրբեջանի հետ Հայաստանի բախումների գլխավոր պատճառը սահմանային վեճերն էին: Ադրբեջանը, տեսնելով, որ հայերը ցանկություն չունեն զիջումների գնալու, վճռեց կանգ չառնել և ոչ մի միջոցի առջև: Սրա հետևանքով միջէթնիկական բախումները դարաբաղյան տարածաշրջանում վերաճեցին Ղարաբաղի շուրջ հայաադրբեջանական միջպետական բախման: 1918 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունների վրա ազդող ուժ հանդիսացավ Թուրքիան: Ադրբեջանը՝ որպես Անդրկովկասում պանթուրքիզմի առաջապահ²⁰, ի տես Թուրքիայի՝ համարում էր իր անկախությունը այլոց հարձակումներից պաշտպանողի ու հենարանի: Վերջինս, Ադրբեջանին զրկելով որպես ինքնուրույն միավոր հանդես գալու հնարավորությունից, նրա հետ վարվում էր որպես իր գավառի՝ հայաադրբեջանական հարաբերությունները փաստորեն վերածելով հայթուրքականի:

Գրականություն

1. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:
2. Բաբալյան Ա., Էջեր Հայաստանի անկախութեան պատմությունից, Գահիրե, 1959:
3. Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը 1919-1921 թթ., Երևան, 1991:
4. Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Երևան, 1999:
5. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 20, 23, 25, 33:
6. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 18:
7. ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 44, թ. 1, նաև ֆ. 200, ց. 1, գ. 85, թ. 3:
8. Հայաստանի Հանրապետության պառլամենտի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010:
9. «Հայրենիք», Բոստոն, 1924:
10. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ա. Կարինյանի արխիվ, Մ. Туманов «Дипломатическая история РА», 1925.

¹⁹ Տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 343:

²⁰ Տե՛ս Ռուբեն, Հայաստան և Ատրպեյճան, «Հայրենիք», Բոստոն, 1927, հունիս, էջ 73:

11. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան:
12. Ռուբեն, Հայաստան և Ատրպեյճան, «Հայրենիք», Բոստոն, 1927:

Позиция Армении и Азербайджана относительно пограничных проблем (июнь-август 1918г.)

Юрик Гуляян

Резюме

Ключевые слова: Турция, Константинополь, Карабах, Зангезур, граница, конференция, правительство, политика

Армения и Азербайджан в вопросе границ изначально придерживались различных позиций. Азербайджан не был намерен отказаться от территориальных претензий к Армении. Азербайджанская сторона считала, что «где и как бы ни разрешались бы пограничные проблемы, они не могут касаться Елизаветпольской губернии, т.к. она является безраздельной частью Азербайджана». Правительство Азербайджана в вопросе утверждения своей власти в отношении Карабаха проявляло последовательность. На этом этапе правительство Армении не намерено было идти на конфронтацию и искало пути для мирного разрешения данной проблемы в Константинополе. Армянская сторона выражала готовность к мирному урегулированию конфликта, ожидая решений конференции по этому вопросу в Константинополе, в рамках которой среди прочих должен был разрешиться и вопрос Карабаха. Встречи армянской стороны с руководящими кругами Турции привели к пониманию того, что турецкая сторона в вопросе Карабаха определенно поддерживает азербайджанскую позицию. Армянская сторона всячески пыталась избежать конфронтации с противоположной стороной. Именно этим обстоятельством объясняется некоторая осторожность армянской стороны относительно турецкого присутствия в Закавказье в этот период. Состоявшиеся переговоры между конфликтующими сторонами, из-за кардинально различных позиций, не дали никаких результатов. Границы между Арменией и Азербайджаном так и не были определены.

The Position of Armenia and Azerbaijan on Border Issues (June–August 1918)

Yurik Ghulyan

Summary

Key words: *Turkey, Constantinople, Karabakh, Zangezur, border, conference, government, politics*

Initially, Armenia and Azerbaijan adhered to different positions on the issue of borders. Azerbaijan did not intend to abandon territorial claims against Armenia.

Azerbaijan believed that “no matter where and how the border issues are resolved, they cannot relate to the Elizavetpol province, since it was an integral part of Azerbaijan”. The Azerbaijani government has shown consistency concerning the issue of asserting its power in Karabakh. At that stage, the Armenian government did not intend to go to confrontation with Azerbaijan on border issues and preferred to resolve the problem in Constantinople. The Armenian side expressed its readiness for a peaceful settlement of the conflict awaiting the decisions of the conference in Constantinople, within the framework of which the Karabakh issue was to be resolved. After the meetings with Turkish leaders at the Constantinople conference, the Armenian side was convinced that the Turkish side definitely supports the Azerbaijani position on the Karabakh issue. The Armenian side tried to avoid confrontation with them in every possible way. This circumstance explains the fact that during the Turks' presence in the Caucasus, the Armenian government pursued a cautious policy towards Karabakh and Zangezur. The negotiations on the issue did not yield any results due to radically different positions of the sides. Thus, the borders between Armenia and Azerbaijan have not been defined yet.

Ներկայացվել է 07.10.2021 թ.

Գրախոսվել է 14.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.